

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սարգսյան Անի Ռուբենի

ՊՂՆՁԻ ՀԻՄՔՈՎ ԲԱՐՁՐ ՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ
ԶԵՐՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՄԲ ՓՈՇԵԿՈՄՊՈԶԻՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ
ՍՏԱՅՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Ե.16.01 - «Նյութագիտություն» մասնագիտությամբ տեխնիկական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան 2021

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ ПОЛИТЕХНИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ

Саркисян Ани Рубеновна

РАЗРАБОТКА ТЕХНОЛОГИИ ПОЛУЧЕНИЯ ПОРОШКОВЫХ
КОМПОЗИЦИОННЫХ МАТЕРИАЛОВ НА ОСНОВЕ МЕДИ С ВЫСОКОЙ
ПРОВОДИМОСТЬЮ И ТЕРМОСТОЙКОСТЬЮ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата технических наук по специальности 05.16.01-
“Материаловедение”

Ереван 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի գիտական խորհրդի կողմից:


Գիտական ղեկավար՝ տեխ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Գ. Աղբալյան
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
տեխ. գիտ. դոկտոր Հ.Ռ. Դրմեյան
տեխ. գիտ. թեկնածու Լ.Գ. Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ (ք. Երևան)

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հունիսի 18-ին ժամը 15⁰⁰-ին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում (ՀԱՊՀ) գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մետալուրգիա և նյութագիտություն» մասնագիտական խորհրդի «Նյութագիտություն» ենթախորհրդի (թվանիշ Ե.16.01) նիստում: Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փ., 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀԱՊՀ-ի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2021թ. մայիսի 07-ին:

031 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  Ա. Մ. Հովհաննիսյան

Тема диссертации утверждена ученым советом Государственного инженерного университета Армении.

Научный руководитель: докт. техн. наук, проф., С.Г. Агбалян
заслуженный деятель науки РА

Официальные оппоненты: докт. техн. наук Г.Р. Дрмеян
канд. техн. наук Л.Г. Галстян

Ведущая организация: Институт Общей и неорганической химии НАН РА
(г. Ереван)

Защита диссертации состоится “18” июня 2021г. в 15⁰⁰ ч. на заседании подсовета "Материаловедение" (шифр 05.16.01) Специализированного совета “Металлургия и материаловедение” (шифр 031) ВАК РА, действующего при Национальном политехническом университете Армении (НПУА), по адресу:
0009, г. Ереван, ул. Теряна, 105.

С диссертацией можно ознакомиться в библиотеке НПУА.
Автореферат разослан “07” мая 2021 г.

Ученый секретарь Специализированного совета 031, докт. техн. наук, профессор



А.М. Оганесян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքի հրատապությունը և արդիականությունը: Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ուղղություններից է մետաղական հիմքով ու ֆունկցիոնալ հատկություններով օժտված նոր կոմպոզիտային նյութերի ստեղծումը, առանց որոնց անհնար է պատկերացնել տեխնիկական առաջընթացը, հատկապես մեքենաշինության և ռազմական արդյունաբերության հետագա զարգացումը: Ընդ որում, տեխնիկայի զարգացմանը զուգընթաց ավելի մեծ տեղ է հատկացվում կոմպոզիտային նյութերին (ԿՆ), հատկապես մետաղական հիմքով բարձրամուր և ֆունկցիոնալ նշանակության, ինչպիսիք են օրինակ, դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող պղնձի հիմքով փոշեկոմպոզիտային նյութերը, որոնց պահանջարկը շատ մեծ է հատկապես կոնտակտային եռակցման էլեկտրոդների արտադրություն: Էլեկտրոդներից պահանջվում է բարձր էլեկտրահաղորդականություն և ջերմակայունություն, որոնց ապահովման համար օգտագործվող նախապատրաստվածքները ցանկալի է ունենան անձակոտկեն և շերտավոր կառուցվածք, որտեղ արտաքին շերտը կապահովի բարձր էլեկտրահաղորդականություն, իսկ ներքին շերտը՝ բարձր ջերմակայունություն: Այսպիսի կառուցվածք գործնականում հնարավոր է ապահովել միայն փոշեմետալուրգիական եղանակներով, հատկապես շերտավոր կառուցվածքով ծակոտկեն մամլվածքների ստացման, եռակավման, տաք արտամղման և հետագա ջերմային մշակման միջոցով: Սակայն մինչև այժմ լիովին ուսումնասիրված չէ դիսպերս մասնիկներով (ֆազերով) կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի տաք արտամղման և ջերմային մշակման գործընթացների տեսական և տեխնոլոգիական առանձնահատկությունները: Եվ քանի որ փոշեմետալուրգիան հանդիսանում է խիստ հեռանկարային Հայաստանի Հանրապետության համար, որտեղ առկա է մետաղական հումքի մեծ պաշարներ, հատկապես պղնձի, հետևապես առաջարկվող աշխատանքը նույնպես հեռանկարային է և տարբերվում է ավանդական եղանակներից:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է մշակել դիսպերս մասնիկներով (ֆազերով) կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող բարձր էլեկտրահաղորդականությամբ ու ջերմակայունությամբ օժտված պղնձի հիմքով շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի ստացման տեխնոլոգիա և հետազոտել կառուցվածքագոյացման ու հատկությունների ձևավորման գործընթացները:

Աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

1. Կոնտակտային եռակցման էլեկտրոդների բնութագրերի, աշխատաքային պայմանների, կառուցվածքի ու հատկությունների ուսումնասիրումն ու առանձնահատկությունների բացահայտումը:

2. Շերտավոր կառուցվածքով կոնտակտային եռակցման էլեկտրոդների համար դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող փոշեկոմպոզիտային նյութերի և դրանց բաղադրամասերի ընտրումն ու հիմնավորումը:

3. Բարձր էլեկտրահաղորդականությամբ և ջերմակայունությամբ օժտված պղնձի հիմքով դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի բովանդակության պատրաստման և սառը մամլման տեխնոլոգիաների մշակումը և օպտիմալ ռեժիմների ընտրումը:

4. Պղնձի հիմքով դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի տաք արտամղման գործընթացի լարվածադեֆորմացված վիճակի հետազոտումը, առանձնահատկությունները և կառուցվածքագոյացման մեխանիզմի ու կինետիկայի բացահայտումը:

5. Պղնձի հիմքով դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի ջերմային մշակման գործընթացի հետազոտումը և կառուցվածքի ու հատկությունների ձևավորման օրինաչափությունների բացահայտումը:

6. Ստացված շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի կառուցվածքի՝ այդ թվում անցումային շերտի, մետաղագիտական հիմնավորումը և ֆիզիկա-մեխանիկական ու տեխնոլոգիական հատկությունների փոփոխման օրինաչափությունների բացահայտումը կախված միկրոկառուցվածքից և ջերմաստիճանից:

7. Պղնձի հիմքով դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի ստացման տեխնոլոգիայի մշակումը և տեխնիկատնտեսական հիմնավորումը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող պղնձի հիմքով կոմպոզիտային նյութերի ստացման գործընթացների վերլուծությունը, կառուցվածքի և հատկությունների ձևավորման սկզբունքները և հետազոտման խնդրի դրվածքը:

2. Բարձր էլեկտրահաղորդականությամբ և ջերմակայունությամբ օժտված պղնձի հիմքով դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող փոշեկոմպոզիտային նյութերի բաղադրամասերի ընտրումը, բովանդակության պատրաստման և սառը մամլման տեխնոլոգիական գործընթացների հիմնավորումը:

3. Բարձր էլեկտրահաղորդականությամբ և ջերմակայունությամբ օժտված պղնձի հիմքով դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկ-

ներով ամրացվող շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի տաք արտանդման գործընթացի լարվածադեֆորմացված վիճակը, առանձնահատկությունները և կառուցվածքագոյացման մեխանիզմն ու կինետիկան:

4. Տաք արտանդմամբ ստացված բարձր էլեկտրահաղորդականությամբ և ջերմակայունությամբ օժտված պղնձի հիմքով դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի ջերմային մշակման տեխնոլոգիական գործընթացի հիմնավորումը և կառուցվածքագոյացման մեխանիզմն ու կինետիկան:

5. Ստացված շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի կառուցվածքի՝ այդ թվում անցումային շերտի, մետաղագիտական հետազոտության արդյունքները, ինչպես նաև ֆիզիկական, մեխանիկական և տեխնոլոգիական հատկությունների փոփոխման օրինաչափությունները կախված միկրոկառուցվածքից և ջերմաստիճանից:

6. Դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող պղնձի հիմքով բարձր էլեկտրահաղորդականությամբ և ջերմակայունությամբ շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի ստացման տեխնոլոգիան և տեխնիկատնտեսական հիմնավորումը:

Աշխատանքի գիտական նորույթը: Բացահայտվել են $1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{0,5}$ և $13\%Ni+3\%Al+1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{0,5}$ բաղադրություններով բովախառնուրդներից պատրաստված ծակոտկեն մամլվածքների տաք արտանդման առանձնահատկությունները, համաձայն որի միևնույն արտանդման գործակցի դեպքում չեռակալված մամլվածքի ծակոտկենության մեծացումը նպաստում է արտանդման ճնշման բարձրացմանը: Ցույց է տրված, որ ծակոտկենության բոլոր արժեքների դեպքում ($\theta_0=25...30\%$), $\lambda=5...6$ արտանդման գործակցով չեռակալված ծակոտկեն մամլվածքներն արտանդելիս՝ ձուլածո համաձուլվածքի հետ համեմատած, P_0 -ն անընդհատ աճում է, որն արդյունք է չեռակալված ծակոտկեն նյութերում դիֆուզիայով առաջացած մետաղական կոնտակտների փոքր քանակության՝ արդյունքում նյութի մածուցիկ-պլաստիկ հոսքի, հետևապես սողքի արագության փոքրացման:

Բացահայտվել է, որ եռակալված մամլվածքների ծակոտկենության մեծացմամբ P_0 -ն սկզբում աճում է (մինչև $\theta_0=20\%$), իսկ հետո՝ նվազում: Ցույց է տրված, որ ճնշման փոփոխման այսպիսի օրինաչափություններն արդյունք են փակ ծակոտկենության առկայության, որն առաջանում է մինչև $15...20\%$ նախնական ծակոտկենության դեպքում՝ փոքրացնելով նյութի սողքի արագությունը: Տեսականորեն հաշվարկվել և փորձնական եղանակով հաստատվել է, որ $\lambda \geq 4$ արտանդման գործակցով տաք արտանդման դեպքում ապահովվում է պղնձի հիմքով անծակոտկեն շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի ստացումը, որի կառուցվածքը տեստուրացված է:

«Արտաքին շերտ-միջուկ» կոնստրուկցիայով, բայց տարբեր պլաստիկություն ունեցող շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի համատեղ տաք արտանդանն նպատակով՝ տեսականորեն հաշվարկվել և փորձնական եղանակով հիմնավորվել ու առաջարկվել է բանաձև՝ որը հնարավորություն է տալիս միջուկի տրամագծի ընտրման միջոցով, հաշվի առնելով մայրակի թեքության անկյունը և բաղադրիչների պլաստիկ հատկությունները, տաք արտանդանն ջերմաստիճանում ապահովել տարբեր պլաստիկություն ունեցող նյութերի անցումային շերտում փոքր սահքի դեֆորմացիաներ: Բացահայտվել է, որ ներքին շիման կորերի գագաթների առավելագույն բարձրությունները համապատասխանում են շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի օպտիմալ դեֆորմացման աստիճաններին, որոնք ապահովում են բարձր մեխանիկական հատկություններ և պահանջվող խտություն:

Բացահայտվել է ստացված շերտավոր կառուցվածքով արտադրատեսակների միկրոկառուցվածքում անցումային շերտի գոյությունը: Տույց է տրված, որ մխումից ու ծերացումից հետո անցումային գոտում ճաքեր չեն առաջանում, իսկ բաղադրիչ շերտերի բաժանման սահմաններն ուղղագծային են փորձանմուշի ամբողջ երկայնքով: Նիկելի և ալյումինի դիֆուզիայի արդյունքում առաջանում է դիֆուզված շերտ և պղնձի հիմքով պինդ լուծույթ, որի խտությունն աճում է 6 մկմ-ից ($\lambda=1,58$) մինչև 17 մկմ ($\lambda=3,74$)՝ արդյունքում մեծանում է երկմետաղի շերտերի կցման ամրությունը կտրմամբ:

Բացահայտվել է, որ մշակված շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութի ներքին շերտի ($13\%Ni+3\%Al+1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{(a)}$) կառուցվածքը բազմաֆազային է և բաղկացած է պղնձի հիմքով α պինդ լուծույթից (Ni-ի, Al-ի, Cr-ի և Zr-ի պինդ լուծույթը պղնձում), Cr-ի դիսպերս մասնիկներից և Cu_5Zr , Ni_3Al , $NiAl$ ինտերմետաղական ֆազերից, մինչդեռ արտաքին շերտի ($1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{(a)}$) կառուցվածքը եռաֆազ է և բաղկացած է պղնձի հիմքով α պինդ լուծույթից (Cr-ի և Zr-ի պինդ լուծույթը պղնձում), Cr-ի դիսպերս մասնիկներից և Cu_5Zr ինտերմետաղական ֆազից, ընդ որում, պղնձի հիմքով α պինդ լուծույթի մայրակն (արտաքին շերտ) ապահովում է բարձր էլեկտրահաղորդականություն (Cu-ի էլեկտրահաղորդականության $\sim 80\%$) և մեխանիկական հատկություններ ($\sigma_{\pm}=550...600$ ՄՊա, $HB=1550...1850$ ՄՊա, $\delta=10...20\%$), իսկ պղնձի հիմքով α պինդ լուծույթի մայրակը (ներքին շերտ)՝ բարձր մեխանիկական հատկություններ ($\sigma_{\pm}=900...950$ ՄՊա, $\delta=10...15\%$, $HB=2500...2600$ ՄՊա) և ջերմակայունություն մինչև $500^{\circ}C$:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Մշակվել է դիսպերս մասնիկներով կարծրացող (ինտերմետաղական ֆազերով) և դիսպերս հատիկներով ամրացվող պղնձի հիմքով բարձրամուր և բարձր էլեկտրահաղորդականությամբ ու ջերմակայունությամբ օժտված շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի ստացման տեխնոլոգիա, որը ներառում է արտաքին և ներքին շերտերի բովախառնուրդների պատրաստում, արտաքին

շերտի և միջուկի մամլում, մեկը մյուսի մեջ հավաքում, վերամամլում, տաքացում (եռակալում), տաք արտամղում և ջերմային մշակում: Մշակված շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութը նախատեսված է ծանր պայմաններում աշխատող կոնտակտային եռակցման էլեկտրոդներ պատրաստելու համար:

Մշակված տեխնոլոգիան ընդունվել է «Օմեգա» ՍՊԸ-ի (ք.Երևան) կողմից ներդրման նպատակով:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ատենախոսության թեմայի համար հիմք են ծառայել հայրենական և արտասահմանյան դասական և ժամանակակից աշխատությունները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել հրապարակված պաշտոնական տեղեկատուները և տեղեկագրերը, ինչպես նաև տեխնիկական պարբերականները, պատենտները, ԳՈՍՏ-երը և այլն:

Հետազոտությունների ընթացքում կիրառվել են համակարգչային, մոդելավորման, գրաֆիկական, մետաղագրական, ռենտգենակառուցվածքային, ռենտգենասպեկտրալ, համեմատական վերլուծությունների մեթոդներ և այլն:

Աշխատանքի արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնադրույթները և գործնական հանձնարարականներն զեկուցվել ու քննարկվել են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի 2015...2020թթ. տարեկան գիտաժողովներում և «Մետալուրգիա և նյութագիտություն» ամբիոնի գիտական սեմինարներում: Ատենախոսության արդյունքները հրապարակված են 19 գիտական աշխատանքներում, որից երեքը հեղինակային են, իսկ մեկը՝ ՀՀ գյուտի արտոնագիր:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, ընդհանուր եզրակացությունից և 135 անուն օգտագործված գրականության ցանկից: Այն շարադրված է 142 համակարգչային տպագիր էջում, ներառում է 63 նկար, 18 աղյուսակ և մեկ հավելված:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են հիմնական նպատակները և պաշտպանության ներկայացվող դրույթները, ինչպես նաև աշխատանքի կիրառական նշանակությունը:

Առաջին գլխում կատարվել է դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող՝ այդ թվում շերտավոր կառուցվածքով կոմպոզիտային նյութերի ստացմանը և կառուցվածքի ու հատկությունների ձևավորմանը նվիրված գրականության վերլուծություն: Արդյունքում պարզվել է, որ բարձր կարծրությամբ, ամրությամբ, էլեկտրահաղորդականությամբ և ջերմակայունությամբ օժտված համաձուլվածքները, որոնք կարող են կիրառվել կոնտակտային եռակցման էլեկտրոդների համար, պետք է լինեն պղնձի հիմքով և

բաղկացած մակերևութային շերտից ու միջուկից, որոնց մայրակի կարծրացումը և ամրացումը նպատակահարմար է կատարել ջերմամշակմամբ՝ դիսպերս մասնիկներով կարծրացման և դիսպերս հատիկներով ամրացման մեխանիզմներով: Մակերևութային շերտի բարձր էլեկտրահաղորդականությունը պետք է ապահովել պղնձի հիմքով ցածր լեգիրված, իսկ միջուկի բարձր մեխանիկական հատկությունները և ջերմակայունությունը՝ պղնձի հիմքով բարձր լեգիրված անձակոտկեն կառուցվածքով կոմպոզիտային նյութերով՝ ապահովելով ամուր կապ «արտաքին շերտ-միջուկ» անցումային շերտում: Հիմնավորվել է նշված խնդիրների լուծման փոշեմետալուրգիական մեթոդը, հատկապես ծակոտկեն շերտավոր կառուցվածքով մամլվածքների տաք արտամղման գործընթացը, որի ժամանակ եռակալումը և կառուցվածքի ձևավորումը համատեղվում են: Արդյունքում հիմնավորվել են աշխատանքի նպատակը և հետազոտման խնդիրները:

Երկրորդ գլխում կատարվել է ելանյութերի ընտրում, բնութագրերի ուսումնասիրում և հիմնավորում: Արտաքին և ներքին շերտերի համար որպես մայրակի նյութ ընտրվել և հիմնավորվել է ՈՄՇ-1 մակնիշի պղնձափոշին, իսկ որպես լեգիրող տարրեր՝ ՈՒՄՇ-1 մակնիշի քրոմի և ՈՒՄՇ-1 մակնիշի ցիրկոնիումի փոշիները: Ներքին շերտի համար՝ բացի վերը նշվածներից, լրացուցիչ ընտրվել է նաև ՈՒՄՇ-1 մակնիշի նիկելի և ԱՄՇ-1Ա մակնիշի ալյումինի փոշիներ: Մշակվել է հետազոտման մեթոդիկան և կատարվել չափիչ-հսկիչ սարքավորումների ընտրում ու հիմնավորում: Նախագծվել և պատրաստվել են փոքր չափսերի փորձանմուշների ձգման և շերտավոր փոշեկոմպոզիտային նյութերի շերտերի կցման ամրության որոշման հարմարանքներ:

Փորձագիտական հետազոտությունների արդյունքում որոշվել է $1,0\%Cr + 0,8\%Zr + Cu_{0,5}$ (արտաքին շերտ) և $13\%Ni + 3\%Al + 1,0\%Cr + 0,8\%Zr + Cu_{0,5}$ (ներքին շերտ) բաղադրություններով փոշեկոմպոզիտային նյութերի բովախառնուրդների սառը մամլման լավարկված ճնշումները ($P_{տ} = 280-320$ ՄՊա), որոնք ապահովում են մամլվածքների 20...25% նախնական ծակոտկենություն:


Երրորդ գլխում հետազոտվել է պղնձի հիմքով փոշեկոմպոզիտային նյութերի (արտաքին շերտ- $1,0\%Cr + 0,8\%Zr + Cu_{0,5}$, ներքին շերտ- $13\%Ni + 3\%Al + 1,0\%Cr + 0,8\%Zr + Cu_{0,5}$) լարվածադեֆորմացված վիճակը միառանցք և եռառանցք սեղման դեպքում: Հիմք ընդունելով պրոֆ. Գ.Պետրոսյանի կողմից մշակված ծակոտկեն նյութերի պլաստիկության տեսությունը, կառուցվել են պղնձի հիմքով փոշեկոմպոզիտային ծակոտկեն նյութերի դեֆորմացման դիագրամները և բացահայտվել արտամղիչի կոնտեյներում այդ նյութերի խտացման մեխանիզմը: Արդյունքում պարզվել է, որ տաք արտամղման գործակցի մեծացումով շրջանային դեֆորմացիաներն աճում են և կախված չեն մամլվածքի սկզբնական ծակոտկենությունից: Բացահայտվել են՝ կոշտ գլանաձև մայրակում մեկ և եռառանցքանի սեղմման դեպքում, σ ճնշման և θ ծակոտկե-

նության կախվածությունը դեֆորմացման աստիճանից՝ $13\%Ni+3\%Al+1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{0,5}$ բաղադրությամբ բովախառնուրդից պատրաստված $\theta_0=0,2$ հարաբերական ծակոտկենությամբ ծակոտկեն փորձանմուշների համար: Ցույց է տրված, որ եռատանցքանի սեղման դեպքում ծակոտկենությունը նվազում է այնքան արագ, որքան փոքր է նմուշի սկզբնական հարաբերական ծակոտկենությունը:

Ուսումնասիրվել է արտաքին և ներքին շերտերի ծակոտկեն մամլվածքների տաք արտամղման օրինաչափությունները, համաձայն որի միևնույն արտամղման գործակցի դեպքում չեռակալված մամլվածքի ծակոտկենության մեծացումը նպաստում է արտամղման ճնշման բարձրացմանը: Ցույց է տրված, որ ծակոտկենության բոլոր արժեքների դեպքում ($\theta_0=25...30\%$), $\lambda=5...6$ արտամղման գործակցով չեռակալված ծակոտկեն մամլվածքներն արտամղելիս՝ ձուլվածո համաձուլվածքի հետ համեմատած, P_0 -ն անընդհատ աճում է, որն արդյունք է չեռակալված ծակոտկեն նյութերում դիֆուզիայով առաջացած մետաղական կոնտակտների փոքր քանակության՝ արդյունքում նյութի մածուցիկ-պլաստիկ հոսքի, հետևապես սողքի արագության փոքրացման: Մինչդեռ եռակալված մամլվածքների ծակոտկենության մեծացմամբ P_0 -ն սկզբում աճում է (մինչև $\theta_0=20\%$), իսկ հետո՝ նվազում: Նմանատիպ օրինաչափություն է նկատվում նաև λ արտամղման գործակցի փոփոխման ժամանակ: Ցույց է տրված, որ ճնշման փոփոխման այսպիսի օրինաչափություններն արդյունք են փակ ծակոտկենության առկայության, որն առաջանում է մինչև $15...20\%$ նախնական ծակոտկենության առկայության դեպքում՝ փոքրացնելով նյութի սողքի արագությունը: Տեսականորեն հաշվարկվել և փորձնական եղանակով հաստատվել է, որ $\lambda \geq 4$ արտամղման գործակցով տաք արտամղման դեպքում ապահովվում է պլնձի հիմքով անծակոտկեն կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի ստացումը, որոնց կառուցվածքները տեքստուրացված են:

Հաշվարկվել է «արտաքին շերտ-միջուկ» շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի միջուկի R-երկրաչափական պարամետրը, որն ապահովում է արտամղման ժամանակ շերտերի կոնտակտային մակերևույթների վրա հարաբերական տեղաշարժերի բացակայություն, հետևաբար շերտերի կցման բարձր ամրություն: Այդ նպատակով արտաքին շերտի բովախառնուրդից ($1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{0,5}$) երկկողմանի մամլմամբ ($P_{տ}=300$ ՄՊա) պատրաստվել են սնամեջ գլանական ($D_w=29,5$ մմ, $D_0=21,5$ մմ, $H=50$ մմ, $\theta=10, 15, 20, 25, 30\%$), իսկ միջուկի բովախառնուրդից ($13\%Ni+3\%Al+1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{0,5}$)՝ գլանական նմուշներ ($D_0=21$ մմ, $H=50$ մմ, $\theta=10, 15, 20, 25, 30\%$), այնուհետև հավասար ծակոտկենությամբ մամլվածքներն իրար մեջ հավաքելուց, $P_{տ}=320$ ՄՊա ճնշմամբ վերամամլումից և ջրածնի միջավայրում $900...950^\circ C$ շերմաստիճանում $1...1,5$ ժ եռակալելուց հետո ենթարկվել են տաք արտամղման մայրակի $2\alpha_0=110^\circ$ և $\lambda=3...6$ արտամղման գործակցով: Կորդի-

Նատային ցանցի եղանակով ուսումնասիրվել է համակարգում առաջացած լարվածադեֆորմացված վիճակը (նկ. 1) և մշակվել հաշվարկային եղանակ:



Նկ. 1. Արտաքին շերտ-միջուկ կառուցվածքով շերտավոր կոնյուգիտային նյութի հոսքի սխեման արտամղման ժամանակ

Ելնելով արտամղման ջերմաստիճանում շերտերի համատեղ հոսքի պայմանից, շերտավոր կառուցվածքով փոշեկոնյուգիտային նյութերի տաք արտամղման գործընթացի համար դուրս է բերվել նրա երկրաչափական պարամետրերի որոշման օպտիմալ փոխհարաբերություն.

$$R_\delta = \left(\frac{R_u}{R_d} \right) \cdot \left[R_d - R_u \left(\frac{R}{R_u} \right)^{\frac{\sigma_{hnu2}}{\sigma_{hnu1}}} \cdot e^{\frac{b}{2n} \left(\frac{\sigma_{hnu1} - \sigma_{hnu2}}{\sigma_{hnu1}} \right)} \right],$$

որտեղ R_u -ը շերտավոր կառուցվածքով մամլվածքի սկզբնական, իսկ R_d -ն՝ տաք արտամղումից հետո ստացված ձողի վերջնական շառավիղներն են, մմ; R -ը՝ արտամղումից հետո ստացված միջուկի շառավիղը, մմ; σ_{hnu1} -ը և σ_{hnu2} -ը՝ համապատասխանաբար արտաքին և ներքին շերտերի նյութերի հոսունության սահմաններն արտամղման ջերմաստիճանում, ՄՆ/մ²; n -ը և b -ն հաշվարկային գործակիցներ են: R_δ -ի բանաձևի մեջ մտցնելով կոնկրետ R_u , R_d , σ_{hnu1} , σ_{hnu2} և a_α արժեքները, որոշվել է R_δ երկրաչափական պարամետրը, որը հավասար է ~21,0մմ, ըստ $R=10,5$ մմ օպտիմալ արժեքի և ապահովում է արտամղան ժամանակ կյոր կտրվածքով շերտավոր փոշեկոնյուգիտային նյութերի կոնտակտային մակերևույթների վրա հարաբերական տեղաշարժերի բացակայություն, հետևաբար շերտերի կցման բարձր ամրություն:


Ներքին շփման մեթոդով հետազոտվել է ամրացման և դեֆորմացիայի աստիճանի միջև եղած կապն արտաքին և ներքին շերտերի միջև տարբեր ջերմաստիճաններում: Բացահայտվել է, որ ներքին շփման կորերի գազաթների առավելագույն բարձրություններին համապատասխանում են երկմետաղական համակարգերի առանձին բաղադրիչների դեֆորմացիայի օպտիմալ աստիճաններ, որոնք երաշխավորում են արտամղման ժամանակ բարձր մեխանիկական հատկությունների և անհրաժեշտ խտության ստացում:

Ցույց է տրված, որ նրքին շերտից արտաքին շերտ նիկելի դիֆուզման արդյունքում առաջանում է անցումային շերտ, որի հաստությունն աճում է արտամղման գործակցի մեծացմամբ և առաջանում է պղնձի հիմքով պինդ լուծույթ, որի խորությունն աճում է 6 մկմ-ից ($\lambda=1,58$) մինչև 17 մկմ ($\lambda=3,74$): Նմանատիպ պինդ լուծույթ է առաջանում նաև Al-ի դիֆուզիայի դեպքում: Մեծանում է նաև լուծված շերտի խորությունը՝ $\lambda=1,58$ -ի դեպքում 17 մկմ-ից մինչև 22 մկմ $\lambda=3,74$ -ի դեպքում, հետևաբար աճում է նաև երկմետաղի շերտերի կցման ամրությունը կտրմամբ: Մխումից և նրան հաջորդող սառը ճնշմամբ մշակումից հետո անցումային գոտում ճաքեր և շերտավորվածություններ չեն առաջանում, իսկ բաղադրիչ շերտերի բաժանման սահմաններն ուղղաձային են փորձանմուշի ամբողջ երկայնքով:


Տաք արտամղման ջերմաստիճանների և դեֆորմացիաների լայն միջակայքում բացահայտվել են $1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{0.5}$ և $13\%Ni+3\%Al+1,0\%Cr+0,8\%Zr+Cu_{0.5}$ բաղադրությամբ փոշեկոմպոզիտային նյութերի կառուցվածքագոյացման օրինաչափությունները: Դուրս են բերվել տաք արտամղման պարամետրերից կախված ամրության և կարծրության կախվածություններ, որի արդյունքում ընտրվել և հիմնավորվել է տաք արտամղման լավարկված ռեժիմները. արտամղման ջերմաստիճանը՝ $T_w=900...950^{\circ}C$, արտամղման ջերմաստիճանում պահման տևողությունը՝ $\tau_w=1...1,5\text{ժ}$, մայրակի կոնական անկյունը՝ $2\alpha_{\text{գ}}=110^{\circ}$ և արտամղման գործակիցը՝ $\lambda=4$:

Համալիր գիտափորձնական հետազոտությունների արդյունքում (նկ. 2, 3) որոշվել է ամրացնող ջերմային մշակման (մխում, ծրացում) լավարկված պարամետրերը՝ $T_{\text{մ}}=1000\pm 25^{\circ}C$, $\tau_{\text{մ}}=1...1,5\text{ժ}$, $T_{\text{ծր}}=450\pm 25^{\circ}C$, $\tau_{\text{ծր}}=6\text{ժ}$, որոնք ապահովում են ոչ միայն բարձր մեխանիկական հատկություններ (α -պինդ լուծույթի հիմքով արտաքին շերտ - $\sigma_{\text{գ}}=550...600\text{ՄՊա}$, $HB=1550...1850\text{ՄՊա}$, $\delta=10...20\%$, α -պինդ լուծույթի հիմքով ներքին շերտ - $\sigma_{\text{գ}}=900...950\text{ՄՊա}$, $\delta=10...15\%$, $HB=2500...2600\text{ՄՊա}$), այլ նաև արտաքին շերտի բարձր ջերմահաղորդականություն ($\chi=70$ Վտ/Կ.մ), էլեկտրահաղորդականություն (Cu -ի $\sim 80\%$ -ը) և ներքին շերտի ջերմակայունություն մինչև $500^{\circ}C$: Ստացված փոշեկոմպոզիտային նյութի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ ծակոտկեն շերտավոր մամվածքի տաք արտամղումն

ապահովում է պրակտիկորեն անձակոտկեն կառուցվածք, իսկ հետագա ջերմային մշակումը՝ պահանջվող ֆիզիկա-մեխանիկական հատկություններ:




Նկ. 2. Կարծրության (1, 2), ամրության սահմանի (3, 4) և հարաբերական երկարացման (5, 6) կախվածությունը միսման ջերմաստիճանից, երբ $\tau_{\text{մ}} = 1\text{ժ}$, $T_{\text{ծ}} = 450^\circ\text{C}$, $\tau_{\text{ծ}} = 6\text{ժ}$; 1, 3, 5 - արտաքին շերտ ($1,0\%Cr + 0,8\%Zr + Cu_{\text{մ}}$); 2, 4, 6 - ներքին շերտ ($13\%Ni + 3\%Al + 1,0\%Cr + 0,8\%Zr + Cu_{\text{մ}}$)



Նկ. 3. Կարծրության (1, 2), ամրության (3, 4) և հարաբերական երկարացման (5, 6) կախվածությունը ձերացման ջերմաստիճանից, երբ $T_{\text{մ}} = 1000 \pm 25^\circ\text{C}$, $\tau_{\text{մ}} = 1,5\text{ժ}$, $\tau_{\text{ծ}} = 6\text{ժ}$: 1, 3, 5 - արտաքին շերտ ($1,0\%Cr + 0,8\%Zr + Cu_{\text{մ}}$); 2, 4, 6 - ներքին շերտ ($13\%Ni + 3\%Al + 1,0\%Cr + 0,8\%Zr + Cu_{\text{մ}}$)

Մետաղագիտական հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ մշակված շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութի ներքին շերտի ($13\%Ni + 3\%Al + 1,0\%Cr + 0,8\%Zr + Cu_{\text{մ}}$) կառուցվածքը բազմաֆազային է և բաղկացած է պղնձի հիմքով α_1 պինդ լուծույթից (Ni-ի, Al-ի, Cr-ի և Zr-ի պինդ լուծույթը պղնձում), Cr-ի դիսպերս մասնիկներից, Cu_5Zr , Ni_3Al և $NiAl$ ինտերմետաղական ֆազերից, մինչդեռ արտաքին շերտի ($1,0\%Cr + 0,8\%Zr + Cu_{\text{մ}}$) կառուցվածքը եռաֆազ է և բաղկացած է պղնձի հիմքով α պինդ լուծույթից

(Cr-ի և Zr-ի պինդ լուծույթը պղնձում), Cr-ի դիսպերս մասնիկներից և Cu_5Zr հնտերմետաղական ֆազից (նկ. 4):




Նկ. 4. Տաք արտամղմամբ ստացված շերտավոր փոշեկոմպոզիտային նյութերի շերտերի միկրոկառուցվածքները ջերմամշակումից հետո (x500). ա) արտաքին շերտ ($1,0\%Cr+0,8\%Zr+Cu_5$), բ) ներքին շերտ $3\%Ni+3\%Al+1,0\%Cr++0,8\%Zr+Cu_{50}$)

Չորրորդ գլխում մշակվել է դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող պղնձի հիմքով շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութի ստացման տեխնոլոգիա (նկ. 5), որը հնարավորություն է տալիս ապահովելու ոչ միայն բարձր մեխանիկական հատկություններ՝ ամրություն, կարծրություն, շիկակայունություն, ջերմակայունություն, այլ նաև բարձր ֆիզիկական հատկություններ՝ ջերմահաղորդականություն և էլեկտրահաղորդականություն:

Ընտրվել են հիմնական և օժանդակ սարքավորումներ: Կատարվել է արտադրատեսակների անվանացանկի ընտրություն և իրականացվել տեխնիկատնտեսականն հիմնավորում, համաձայն որի մեկ տոննա դետալների ինքնարժեքը կազմել է 8372648.00 դր, իսկ մեծածախ գինը՝ 10024275.00դր:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հիմնավորվել է պղնձի հիմքով կոնտակտային եռակցման էլեկտրոդների ստացման գործընթացի փոշեմետալուրգիական եղանակը, համաձայն որի մայրակի կարծրացումը և ամրացումը պետք է կատարվի դիսպերս մասնիկներով կարծրացման և դիսպերս հատիկներով ամրացման մեխանիզմներով՝ ջերմամշակմամբ, իսկ բարձր էլեկտրահաղորդականությունը, ջերմահաղորդականությունը և ջերմակայունությունը՝ շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութերի օգտագործմամբ, որտեղ մակերևութային շերտի բարձր էլեկտրահաղորդականությունը և ջերմահաղորդականությունը պետք է ապահովի ցածր լեգիրված պղնձյա անձակոտկեն մարյակը, իսկ միջուկի բարձր մեխանիկական հատկությունները և ջերմակայունությունը՝ պղնձի հիմքով բարձր լեգիրված փոշեկոմպոզիտային անձակոտկեն կառուցվածքով նյութը, որոնց անձակոտկենության ապահովումը նպատակահարմար է իրականացնել տաք արտամղմամբ:



Նկ. 5. Դիսպերս մասնիկներով կարծրացող և դիսպերս հատիկներով ամրացվող պղնձի հիմքով ջերմակայուն և բարձր էլեկտրահաղորդականությամբ ու ջերմահաղորդականությամբ օժտված շերտավոր կառուցվածքով փոշեկոմպոզիտային նյութի ստացման տեխնոլոգիական սխեմա

